ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #49

NGNGO NEW GENERATION

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԼԳԲՏՔԻ+ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ընդունում է հայտեր Հայաստանում բնակվող ԼԳԲՏՔԻ+ անձանցից մասնագիտական վերապատրաստման համար՝ նպատակ ունենալով ամրապնդելու վերջիններիս մասնագիտական հմտությունները և ընդլայնելու նրանց տնտեսապես անկախ լինելու հնարավորությունները:

Հայտադիմումը ՆՍՀԿ կայքում:

Ենթադրամաշնորհային բիզնես ծրագրերի ընդունման մեկնարկ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հայտարարում է ենթադրամաշնորհային ծրագրերի ընդունման մեկնարկը, որը նպատակ ունի աջակցել ԼԳԲՏՔԻ+ անձանց կողմից ղեկավարվող և/կամ նրանց աջակցող փոքր բիզնես նախաձեռնություններին Հայաստանում:

Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 2025թ. դեկտեմբերի 5-ը:

Հայտադիմումը ՆՍՀԿ կայքում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՅ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2025 թվականի սեպտեմբերի 18-ին Երևանում կայացավ հանդիպում-քննարկում հայ բուժաշխատողների հետ՝ «Խոցելի խմբերի կարողությունների զարգացում Հայաստանում՝ բարելավված իրավական պաշտպանության, իրազեկման և տնտեսական ու սոցիալական ներառման միջոցով» ծրագրի շրջանակում:

Հանդիպման նպատակն էր բարձրացնել Հայաստանում բուժաշխատողների իրազեկվածությունը և մասնագիտական կարողությունները՝ անդրադառնալով մարդու իրավունքներին, ներառական առողջապահությանը և խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկություններին և էթիկական նկատառումներին:

Միջոցառման ընթացքում մարդու իրավունքների ոլորտի փորձագետներն անցկացրեցին տեղեկատվական սեսիաներ՝ անդրադառնալով հետևյալ կարևոր թեմաներին.

- «Ներառական առողջապահության կարևորությունը, առանձնահատկություններն ու էթիկական նկատառումները խոցելի խմբերի հետ աշխատելիս» թեման ներկայացրեց իրավաբան, առողջության իրավունքի հարցերով փորձագետ Վիոլետտա Զոփունյանը,
- «Առողջության իրավունք» և «Խարանից և խտրականությունից զերծ մնալու իրավունք» թեմաները ներկայացրեց իրավաբան Շուշան Խնկոյանը:

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ՀԱՅՏԵՐ

Տեղեկացնում ենք, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ում գործում է ժամանակավոր կացարան Հայաստանում գտնվող ԼԳԲՏՔԻ փախստականների և ապաստան հայցողների համար, ովքեր ստիպված են եղել լքել իրենց մշտական բնակության վայրը և այժմ գտնվում են խոցելի իրավիճակում:

Հայտադիմումը ՆՍՀԿ կայքում

Քննարկումները ընդգծեցին առողջապահական ծառայությունների հավասար հասանելիության ապահովման, խարանի և խտրականության վերացման, ինչպես նաև Հայաստանի առողջապահական համակարգում էթիկական պրակտիկայի ամրապնդման հիմնարար կարևորությունը:

Բացման խոսքում «ՆՍՀԿ»-ի մարդու իրավունքների և շահերի պաշտպանության համակարգող Ալինա Միրզոյանը ընդգծեց բուժաշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման կարևորությունը.

«Ներառական և հավասար առողջապահական միջավայրի խթանումը կարևոր նախապայման է յուրաքանչյուր անձի իրավունքների և արժանապատվության պաշտպանության համար: Այսպիսի նախաձեռնությունների միջոցով մենք ձգտում ենք ձևավորել ավելի ուժեղ, առողջ և ներառական հասարակություն Հայաստանում»:

Հանդիպումը ևս մեկ անգամ ընդգծեց քաղաքացիական հասարակության, միջազգային գործընկերների և Հայաստանի բուժաշխատողների միջև շարունակական համագործակցության կարևորությունը՝ մարդու իրավունքների խթանման և բոլորի համար առողջապահական ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ:

Ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) կողմից՝ Ֆրանսիայի դեսպանության ֆինանսական աջակցությամբ:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ՝ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՈՒՄ

2025թ.-ի Հուլիս 17-ից 27-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աջակցությամբ Հայաստանից 12 երիտասարդներ մասնակցեցին Գերմանիայի Բահրետալ քաղաքում կազմակերպված միջազգային ամառային ճամբարին:

Ճամբարը նախաձեռնվել էր «JunOst» երիտասարդական կազմակերպության կողմից և միավորել էր մի շարք երկրների ներկայացուցիչների՝ նպատակ ունենալով խթանել միջմշակութային փոխանակումը, ստեղծագործական մտածողությունը և անձնական զարգացումը: Ճամբարի հիմնական թեմաներն էին երիտասարդների ինքնաճանաչումը, սեփական ուժեղ կողմերի բացահայտումն ու զարգացումը՝ ստեղծագործական աշխատանքի միջոցով:

Նրանք համագործակցել են տարբեր երկրների երիտասարդների հետ՝ կիսվելով փորձով, մասնակցելով քննարկումների, թիմային աշխատանքների, ինտերակտիվ վարժանքների և մշակութային ներկայացումների: Հայաստանի թիմի անդամները հանդես են եկել հայկական մշակույթի տարբեր ներկայացումներով: Ոմանք մասնակցել են ազգագրական պարերի և երգերի ցուցադրությանը, իսկ մյուսները ներկայացրել են հայ նկարիչների, մասնավորապես Մարտիրոս Սարյանի արվեստը՝ ժամանակակից մեկնաբանություններով ստեղծված աշխատանքների միջոցով:

Բոլոր մասնակիցների համար սա առաջին այցն էր եվրոպական քաղաք, և նրանց տպավորությունները բացառիկ էին: Նրանց խոսքով՝ եվրոպական արժեքների հետ անմիջական շփումը, կազմակերպվածությունն ու բազմազանությունը բացել են նոր հեռանկարներ և ինքնազարգացման ուղիներ: Ճամբարի մասնակիցների համար ծրագրի իրականացումը հնարավոր դարձավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի երկարամյա համագործակցության շնորհիվ, որն արդեն տասնյակ տարիներ իրականացնում է երիտասարդական փոխանակման ծրագրեր՝ համագործակցելով Գերմանիայի և այլ երկրների մի շարք կազմակերպությունների հետ:

Հայաստանյան խմբի ղեկավար Լևոն Չիլինգարյանը ճամբարին մասնակցում էր նաև որպես դասընթացավար և ջոկատավար: Նրա խոսքերով՝ նման ձևաչափերը կարևոր հարթակ են երիտասարդների զարգացման և ինքնադրսևորման համար: «Գալիք տարում պլանավորում ենք իրականացնել երկու նոր փոխանակման ծրագիր հայաստանաբնակ երիտասարդների համար, որտեղ նրանք կրկին կստանան միջազգային հարթակում ներգրավվելու հնարավորություն»,- նշել է Լևոն Չիլինգարյանը:

2025թ.-ի հոկտեբերի 23-24-ը տեղի ունեցավ 32-րդ LIFE տեղեկատվական հարթակը:

LIFE-32-ի նպատակն էր զարգացնել երիտասարդների առաջնորդական կարողությունները, խթանել քաղաքացիական ակտիվությունը, բարձրացնել իրավագիտակցությունը, մարդու իրավունքների, պաշտպանության մեխանիզմների մասին իրազեկվածությունը, խարանի և խտրականության հանդեպ զգայունությունը, խթանել հաղորդակցությունը և ցանցերի ստեղծումը:

Հարթակի ընթացքում ներկայացվեցին և քննարկվեցին մի շարք կարևոր թեմաներ՝

«Խարան և խտրականություն» թեմայի շրջանակներում փորձագետ Զարուհի Հովհաննիսյանը ներկայացրեց խարան և խտրականություն հասկացությունները, եզրույթները, դրանց միջև առկա տարբերությունները և կապը, խտրականության հիմնական տեսակները, խտրականության արգելքի հետ կապված տեղական և միջազգային կարգավորումները, անդրադարձ կատարեց հասարակությունում տիրող կարծրատիպերին, հաղթահարման մեթոդներին ու մեխանիզմներին: Քննարկվեց խարանի, խտրականության, կարծրատիպերի, ատելության խոսքի ազդեցությունը խոցելի խմբերի վրա, վիկտիմիզացիան, դրանց դեմ պայքարի և հավասարության ապահովման կարևորությունը հասարակական կյանքում:

«Մարդու իրավունքներ. պաշտպանության մեխանիզմներ» թեմայի շրջանակներում փորձագետ Հասմիկ Հարությունյանը ներկայացրեց մարդու իրավունքների հասկացությունը, տեղական և միջազգային պաշտպանության միջոցները, միջազգային կոնվենցիաները: Քննարկվեցին «Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացությունները, պաշտպանության ունիվերսալ մեխանիզմները:

Փորձագետ, խորհրդատու Լևոն Չիլինգարյանը մասնակիցներին ծանոթացրեց, թե ինչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը, փոխանցման ուղիները և կանխարգելման մեթոդները:

Փորձագետ Գրիգոր Երիցյանը ներկայացրեց «Առաջնորդություն և ակտիվիզմ» թեման, որի շրջանակներում մասնակիցները ուսումնասիրեցին առաջնորդության հիմնական սկզբունքները և արդյունավետ հանրային ներգրավման գործիքները:

Գրիգոր Երիցյանը մասնակիցներին ծանոթացրեց նաև միջազգային երիտասարդական փոխանակումներին, երիտասարդական աշխատանքին, առկա ծրագրերին և հնարավորություններին:

Հարթակը ամփոփեց ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ շնորհակալություն հայտնելով մասնակիցներին ակտիվ ներգրավվածության և հետաքրքիր քննարկման համար՝ հույս հայտնելով, որ հարթակի ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կնպաստեն նորանոր նախաձեռնությունների, կխթանեն ակտիվ ներգրավվածություն հասարակական կյանքում՝ հանուն հանդուրժողական ու ներառական հասարակության ձևավորման:

Տեղեկատվական հարթակի արդյունքում մասնակիցները ամփոփեցին ձեռք բերված գիտելիքները և քննարկեցին դրանց կիրառման հնարավորությունները իրենց համայնքներում:

Հարթակը նպաստեց մասնակիցների միջև փորձի փոխանակմանը, համագործակցության կապերի ձևավորմանը և երիտասարդական նախաձեռնությունների խթանմանը:

LIFE-32 տեղեկատվական հարթակը իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ՝ նպատակ ունենալով աջակցել երիտասարդների հզորացմանը, նրանց ներգրավմանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և ժողովրդավարական արժեքների տարածմանը, հասարակության բոլոր խմբերի համար հավասարության և ներառականության խթանմանը:

ՈՉ ՊԱՏՇԱՃ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՁԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է ՎՆԱՍ.

2025թ.-ի ապրիլին Գ.Բ.-ն այցելել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ծննդատուն /ԲԿ/՝ առողջական վիճակի գանգատների պատճառով: Հետազոտության արդյունքում արձանագրվել են խնդիրներ և ցուցում է տրվել վիրահատական միջամտության:

2025թ.-ի հունիսին նույն ԲԿ-ում կատարվել է վիրահատական միջամտություն՝ առանց լրացուցիչ հետազոտություններ կատարելու: 2025թ.-ի հունիսի 4-ին անձը դուրս է գրվել հիվանդանոցից՝ առանց լրացուցիչ զննություն անցնելու: Հիվանդանոցից դուրս գրվելուց մի քանի օր անց Գ.Բ.-ի

ինքնազգացողությունը վատթարացել է, և Գ.Բ.-ն կապ է հաստատել բժշկի հետ, որից հետո այցելել ԲԿ: Բժշկի կողմից նշվել է, որ բորբոքային գործընթացներ են սկսվել, և նա հնչեցրել է վիրավորական արտահայտություններ ուղղված Գ.Բ.-ին:

Եվս մի քանի օր անց Գ.Բ.-ի ինքնազգացողությունը կրկին վատթարացել է, և վերջինս շտապօգնության մեքենայով տեղափոխվել է Էրեբունի ԲԿ, որտեղ Գ.Բ.-ին ուղղորդել են այն ԲԿ, որտեղ կատարվել է վիրահատությունը: Գումար չունենալու պատճառով Գ.Բ.-ն ստիպված է եղել տաքսիիով տեղափոխվել ԲԿ: Հաջորդ օրը ԲԿ-ում կատարվել են հետազոտություններ, որոնց արդյունքները չեն մեկնաբանվել Գ.Բ.-ին: Բժշկի կողմից կատարվել է միջամտություն առանց անձին տեղեկացնելու միջամտության բնույթը: Միջամտությունից հետո Գ.Բ.-ի ունեցած գանգատներից հետո կատարվել է ԿՏ հետազոտություն, որի արդյունքները ստանալուց հետո բժիշկը Գ.Բ.-ին հայտնել է, որ միջամտության արդյունքում ծակել է նրա միզապարկը: Այնուհետև բժիշկը նշել է, որ նման բաներ գրեթե բոլոր հիվանդանոցներում պատահում են և, որ Գ.Բ.-ն պետք է երեք ամիս մի կերպ «յոլա գնա», որից հետո նոր վիրահատություն է սպասվելու՝ միզապարկը պետք է կարվի: Փաստացի Գ.Բ.-ին բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվել է թերի, ավելին՝ վնաս է հասցվել անձի առողջության, որի հետևանքով Գ.Բ.-ն շարունակում է կրել վնասներ: Գ.Բ.-ն 2025թ.-ի հունիսին դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին (ՆՍՀԿ): Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն:

2025թ.-ի հուլիսի 24-ին ՆՍՀԿ-ի աջակցությամբ դիմում-բողոք է ուղարկվել ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին/Տեսչական մարմին/: Տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ: 2025թ-ի օգոստոսի 13-ին Տեսչական մարմնի կողմից որոշում է կայացվել վարույթը կարճելու մասին: Որոշման մեջ արձանագրված որոշ փաստեր չեն համապատասխանում դիմումատուի կողմից բարձրաձայնած խնդրին, որի հիմքով որոշումը բողոքարկման փուլում է:

Գ.Բ.-ն 2025թ-ի հուլիսի սկզբներին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Նոր-Նորք վարչական շրջանի քննչական վարչությունում: Քննիչի կողմից Գ.Բ.-ին չի տրամադրվել դատաբժշկական փորձաքննություն անցնելու վերաբերյալ ուղեգիր, ինչի կապակցությամբ 2024թ.-ի հուլիսի 24-ին ՆՍՀԿ-ի աջակցությամբ բողոք է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Բողոքը ուղարկելուց օրեր անց Գ.Բ.-ն ուղեգրվել է համապատասխան փորձաքննությանը:

Շուրջ մեկ ամիս Գ.Բ.-ն որևէ տեղեկատվություն չի ստացել քրեական գործի ընթացքի վերաբերյալ: ՆՍՀԿ-ի աջակցությամբ գրություններ են հասցեագրվել համապատասխան գերատեսչություններին՝ գործի ընթացքի մասին տեղեկանալու համար:

Գործի ընթացքի մասին լրացուցիչ կլուսաբանվի:

ԵԱՀԿ-ն ներառել է ՆՍՀԿ-ի արձանագրած 25 դեպք 2024թ.-ի զեկույցում

2025թ-ի նոյեմբերի 17-ին Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) հրապարակել է 2024թ.-ին տեղի ունեցած ատելության հիմքով հանցագործությունների մասին իր տարեկան զեկույցը:

2024 թվականին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ին ներկայացված Հայաստանում տեղի ունեցած ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի շրջանակում ամենաշատ արձանագրված խախտումները ներկայացվել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից: Միայն 2024թ.-ին կազմակերպության կողմից փաստագրված 25 դեպք ամբողջությամբ ներառվել են ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի տարեկան զեկույցում:

Զեկույցին կարող եք ծանոթանալ այստեղ:

ՆՍՀԿ-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՁԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԶՈՐԱՑՐՎԵԼ Է

2025թ.-ի մայիսին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին (ՆՍՀԿ) է դիմել Ա.Ա.-ն (տվյալները փոփոխված են): Վերջինս հայտնել է, որ 2025թ.-ի հունվարին զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Զորակոչի փուլում Ա.Ա.-ն վախեցել է իր սեռական կողմնորոշման մասին հայտնել զինվորական կոմիսարիատում, քանի որ մտավախություն է ունեցել տեղեկատվության տարածման հետ կապված:

Ա.Ա.-ի զորամասում իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը տարածվել է իր ընկերներից մեկի միջոցով և դրանից հետո Ա.Ա.-ի նկատմամբ սկսվել են խտրական դրսևորումները և ճնշումները:

ՆՍՀԿ-ի կողմից անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ անձին զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու համար: Արդյունքում Ա.Ա.-ն տեղափոխվել է Երևանի կայազորային հոսպիտալ/ հոսպիտալ/:

Հոսպիտալում Ա.Ա.-ին ընդունող բժիշկը հայտնել է, որ կավարտեն ձևական գործընթացը և նրան կուղարկեն այլ զորամաս՝ «իր նմանների հետ ծառայելու»: ՆՍՀԿ իրավաբանը կապ է հաստատել հոսպիտալի համապատասխան բաժնի բժշկի հետ և քննարկել օրենսդրական դրույթները: Իրավաբանի կողմից պահանջվել է գործընթացը իրականացնել օրենքներին համապատասխան: Այդ խնդիրների մասին տեղեկացվել է ՀՀ ՄԻՊ-ին և Պաշտպանության նախարարությանը:

Մի քանի օր անց նույն բժիշկը Ա.Ա.-ին հայտնել է, որ պետք է նրա մայրիկին հրավիրեն հոսպիտալ, որպեսզի քննարկեն Ա.Ա.-ի խնդիրը: Ա.Ա.-ն հայտնվել է հոգեբանական ծանր վիճակում, քանի որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվության բացահայտումից հետո ընտանիքը իրենից կհրաժարվի:

ՆՍՀԿ-ն կապ է հաստատել հոսպիտալի բժշկի, ՀՀ ՄԻՊ-ի և ՊՆ-ի հետ՝ խնդրի լուծման համար: Ի վերջո՝ հաջողվել է կանխել բժշկի կողմից Ա.Ա.-ի մորը հրավիրելը և Ա.Ա.-ի խնդիրը վերջինիս քննարկելը:

Արդյունքում, Ա.Ա.-ն հոսպիտալում անցել է համապատասխան բժշկական զննումների գործընթացը, և 2025թ.-ի հուլիսին ճանաչվել է ոչ պիտանի պարտադիր զինվորական ծառայության համար:

Ա.Ա.-ի անձնական տվյալների գաղտնիությունը ապահովելու նպատակով՝ ՆՍՀԿ-ի աջակցությամբ Ա.Ա.-ի զինկոմիսարիատի հաշվառումը տեղափոխվել է այլ զինկոմիսարիատ:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո սահմանված ժամկետում Ա.Ա.-ին չի տրամադրվել իր զինվորական գրքույկը: ՆՍՀԿ-ի աջակցությամբ Ա.Ա.-ն ստացել է իր զինգրքույկը:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ ԱՆՁԻ ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2025թ.-ի սեպտեմբերի 26-ի գիշերը Ա.Ա.-ն/անունը փոխված է/ իր ընկերոջ հետ զբոսնելիս է եղել Երևան քաղաքի կենտրոնում, երբ նրանց են մոտեցել քաղաքացիական հագուստով անձինք: Այդ անձինք ներկայացել են որպես ոստիկանության աշխատակիցներ և Ա.Ա.-ից ու իր ընկերոջից պահանջել են դատարկել գրպանի և պայուսակի պարունակությունները:

Ոստիկանները Ա.Ա-ի պայուսակի իրերի մեջ նկատել են դեղորայք և սկսել հետաքրքրվել, թե ինչ է դեղորայք է դա: Ա.Ա.-ն չի մեկնաբանել դեղորայքի նշանակությունը, սակայն նշել է, որ բժշկի ցուցումով է: Ա.Ա.-ն չի ցանկացել բացահայտել իր ՄԻԱՎ դրական կարգավիճակը: Ոստիկանները սկսել են հետաքրքրվել, թե արդյոք դա թմրանյութ է թե ոչ, որից հետո, վերցնելով դեղորայքը, փորձել են համացանցում փնտրել տեղեկատվություն: Արդյունքում, պարզելով, որ այդ դեղերը հակառետրովիրուսային դեղեր են՝ Ա.Ա.-ին ասել են, որ կարող է հեռանալ:

Ա.Ա.-ն պնդել է, որ ոստիկանները ներկայանան, սակայն ապարդյուն: Ա.Ա.-ն ոստիկանների անօրինական գործողությունների համար հաղորդում ներկայացնելու նպատակով ցանկացել է տեղափոխվել բաժին, սակայն ոստիկանները թույլ չեն տվել իրենց մեքենան նստել:

Ա.Ա.-ն նույն պահին ուղևորվել է ոստիկանության բաժին և հաղորդում ներկայացրել:

Հաջորդ օրը Ա.Ա.-ն դիմել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին (ՆՍՀԿ) և ստացել իրավաբանական խորհրդատվություն: ՆՍՀԿ-ի կողմից Ա.Ա.-ին աջակցության տրամադրումը շարունակվում է: Գործը գտնվում է ընթացքի մեջ:

«Նման գործելակերպը ոչ միայն հակասում է գործող օրենսդրությանը, այլ նաև խտրական վերաբերմունքի դրսևորում է ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ: Հիշեցնում ենք, որ բժշկական գաղտնիքը՝ այդ թվում՝ ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին տվյալները, պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով»:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն

- **խստորեն դատապարտում է ոստիկանության կողմից անձի իրավունքների խախտումը,**
- **կոչ է անում իրավապահ մարմիններին ապահովել դեպքի օբյեկտիվ քննություն,**
- **վերահաստատում է իր աջակցությունը ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ խտրականության բացառմանն ուղղված պայքարին:**

2025 թ. նոյեմբերի 18–19-ը Աղվերանում անցկացվեց 33-րդ LIFE տեղեկատվական հարթակը, որը մեկտեղել էր Հայաստանի տարբեր մարզերից ժամանած երիտասարդներին՝ նրանց կարողությունները զարգացնելու, մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքները խորացնելու և ներառական քաղաքացիական մասնակցությունը խթանելու նպատակով:

- Հարթակի նպատակներն էին.
- Զարգացնել երիտասարդների առաջնորդության և ակտիվիզմի հմտությունները
- Խթանել քաղաքացիական մասնակցությունն ու ներգրավվածությունը հանրային կյանքում
- Բարձրացնել իրազեկվածությունը մարդու իրավունքների և պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ
- Խորացնել գիտելիքները խարանի, խտրականության և վնասակար կարծրատիպերի մասին
- Աջակցել հաղորդակցությանը, գործընկերային ցանցերի ստեղծմանը և գիտելիքների փոխանակմանը:

Հարթակը մեկնարկեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի բացման խոսքով, ով ողջունեց մասնակիցներին, ընդգծեց հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության գործում երիտասարդների առաջնորդության կարևորությունը և շեշտեց նման հարթակների կարևոր դերը՝ ակտիվ համայնքային առաջնորդությունը խթանելու հարցում: Նա նշեց նաև երիտասարդներին անհրաժեշտ գործիքներով զինելու նշանակությունը՝ խարանի և խտրականության դեմ արդյունավետ պայքարի, իրավագիտակցության բարձրացման, իրավունքների պաշտպանության ու համայնքային ակտիվության խթանման նպատակով: Սերգեյ Գաբրիելյանը խրախուսեց մասնակիցներին ակտիվորեն ներգրավվել հարթակի բոլոր դասընթացներում, կիսվել իրենց փորձով և լիարժեք օգտվել հարթակի ուսուցողական և ցանցային հնարավորություններից:

Բացման խոսքից, ծանոթությունից և սառույցկոտրուկից հետո, ՀՀ ԱՆ ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի» փոխարինող բուժման ծառայության ղեկավար Աննա Ասատրյանը մասնակիցներին կարևոր տեղեկատվություն ներկայացրեց թմրամիջոցների, մեթադոնային փոխարինող բուժման վերաբերյալ:

Այնուհետև իրավապաշտպան, գենդերային փորձագետ և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի անդամ Զարուհի Հովհաննիսյանը անցկացրեց դասընթաց «Խարան և խտրականություն» թեմայով: Նա ներկայացրեց հիմնական հասկացությունները, կարծրատիպերի ծագումն ու ձևավորումը, դրանց ազդեցությունը խոցելի խմբերի վրա՝ ներկայացնելով տեղական և միջազգային հակախտրական իրավական կարգավորումները: Քննարկվեցին նաև ատելության խոսքի, խարանի և վիկտիմիզացիայի վնասները, ինչպես նաև դրանց հաղթահարման մեթոդները: Մասնակիցները ուսումնասիրեցին, թե ինչպես են խարանն ու խտրականությունը ազդում հասարակական վարքի վրա, և ինչ դեր կարող են ունենալ ներառական մոտեցումները՝ հանրային կյանքում հավասարության ամրապնդման համար:

LIFE-33 հարթակի առանձնահատուկ պահերից էր Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատան Առաջին խորհրդական Ժյուլի Ֆորի և տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության հարցերով կցորդ Էյմի Ֆոժանեի հանդիպումը մասնակիցների հետ: Նրանք ակտիվ, ոչ ֆորմալ զրույց ունեցան երիտասարդների հետ, լսեցին նրանց հարցերը, փորձառությունները և մարտահրավերները, և վերահաստատեցին Ֆրանսիայի շարունակական աջակցությունը՝ հավասարության, մարդու իրավունքների և երիտասարդների զարգացման խթանմանը Հայաստանում, ինչպես նաև ներկայացրին դեսպանատան կողմից իրականացվող ծրագրերը, առկա հնարավորությունները:

Այնուհետև ՄԻԱՎ-ի խորհրդատու Լևոն Չիլինգարյանը ներկայացրեց «ՄԻԱՎ և ՁԻԱՀ» թեման՝ անդրադառնալով փոխանցման ուղիներին, կանխարգելման մեթոդներին և անվտանգ սեռական վարքագծի կարևորությանը՝ ընդգծելով իրազեկման, կանխարգելիչ աշխատանքների և անխտրական բուժծառայությունների հասանելիության ապահովման նշանակությունը:

Օրվա ավարտին ԱՄՆ FLEX ծրագրի շրջանավարտ Գնել Գալստյանը ներկայացրեց ծրագրի նպատակները, դիմումների ներկայացման և ընտրության գործընթացը, անդրադարձ կատարեց նաև Հայաստանում գործող Ամերիկյան խորհուրդներին, American Spaces–ին և այլ ուսուցողական, կրթական ու փոխանակման հնարավորություններին:

Հարթակի երկրորդ օրը մեկնարկեց «Մարդու իրավունքներ. պաշտպանության մեխանիզմներ» թեմայով:

Իրավական փորձագետ Շուշան Խնկոյանը մասնակիցներին ներկայացրեց մարդու իրավունքների հիմունքները, ազգային և միջազգային պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև հիմնական կոնվենցիաները, որոնք ապահովում են իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Դասընթացը նպաստեց մասնակիցների իրավագիտակցության խորացմանն ու պաշտպանության գործիքների իմացությանը և ճիշտ կիրառմանը:

Այնուհետև, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ–ի խաղաղաշինության և առաջնորդության փորձագետ Էլեոնորա Սարգսյանը ներկայացրեց արդյունավետ առաջնորդության, երիտասարդական աշխատանքի և հանրային ներգրավվածության գործիքներ: Նա նաև ներկայացրեց միջազգային երիտասարդական փոխանակումների և կարողությունների զարգացման ծրագրեր՝ խրախուսելով մասնակիցներին ուսումնասիրել շարժունության ծրագրերը և զարգացման նոր հնարավորությունները:

Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության ներկայացուցիչները առցանց ձևաչափով ներկայացրին «Երիտասարդ մասնագետներ» ծրագրի հնարավորությունները՝ խթանելով մասնակիցներին քայլեր անել թվային նորարարության և պետական ծառայության ոլորտում:

Հարթակն ամփոփվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի եզրափակիչ խոսքով: Նա շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, փորձագետներին և գործընկերներին՝ վստահեցնելով, որ ձեռք բերված գիտելիքները կնպաստեն նոր երիտասարդական նախաձեռնությունների, քաղաքացիական մասնակցության ամրապնդման և ներառական ու անխտրական հասարակության ձևավորմանը:

Մասնակիցները ամփոփեցին ստացած գիտելիքները և քննարկեցին դրանց կիրառման գործնական քայլերը համայնքներում: Հարթակը նպաստեց.

- **Փորձի փոխանակմանը**
- **Նոր համագործակցային ցանցերի ձևավորմանը**
- **Երիտասարդների նախաձեռնողականության ուժեղացմանը**
- **Իրավագիտակցության, խարանամերժ մոտեցումների և առաջնորդության մասին գիտելիքների մեծացմանը**

LIFE-33 տեղեկատվական հարթակը ևս մեկ անգամ ցույց տվեց երիտասարդության առանցքային դերը ժողովրդավարական արժեքների խթանման և այնպիսի ներառական հասարակության ձևավորման գործում, որտեղ հավասարությունն ու արժանապատվությունը պաշտպանված են բոլորի համար:

LIFE-33 տեղեկատվական հարթակը իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

ՄԻԱՎ -ի կանխարգելման ծրագրերի արդյունքներ 2025թ.

ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՄԻԱՎ-ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ **12259**

ՀԱՅՏՆԱԲԵՐԵՐՎԱԾ ՆՈՐ ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ **109**

Իրավաբանական խորհրդատվությունների քանակ 2025թ.

ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

341 Իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն

ԹՎԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ

ՄԻԱՎ-ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ	
ՏՍՏ	ԿՍԿ
8713	3546
ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՆՈՐ ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ	
92	17
ՍԹՓՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ	
365	192



Ժամանակավոր կացարանից օգտված

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ **24** ԱՆՁ

Սոցիալական աջակցություն է ստացել

96 Ընտանիք

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ

ԳՐՈՒՆՑՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐՈՒՆՑՎԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐՈՒՆՑՎԵԼ ԱՌՈՂՋՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳՐՈՒՆՑՎԵԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

+374 (0) 60378989
+374 (0) 60478989
+374 55 478980
contact@ngngo.net
NGNGO NEW GENERATION
www.ngngo.net

27.11.2025